

Արձանագրություն թիվ 11

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍ

19 մայիսի 2015թ.

ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ա.Ռ.Մելքումյան

Կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի ընդլայնված նիստին մասնակցում էին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ա.Ս.Առաքելյանը, գիտական խորհրդի անդամները, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը և կուրսերի ավագները: Նիստին հրավիրվել էր մասնաճյուղի ուսումնամեթոդական վարչության պետ Ա.Ց.Դավթյանը:

Օրակարգ

1. 2015-16 ուստարվա աշխատանքային ուսումնական պլանների քննարկում:
/զեկ.Ա.Մարգարյան/
2. 2015-16 ուստարվա ամբիոնային և անհատական բեռնվածությունների քննարկում:
/զեկ.Ա.Միրզոյան Մ.Մելքումյան/
3. 2014-15 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների քննարկում:
/զեկ.Ա.Մարգարյան/
4. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Նա ներկայացրեց Կիրառական արվեստ և Դիզայն մասնագիտությունների բակալավրի 2015-16 ուստարվա աշխատանքային ուսումնական պլաններում կատարված փոփոխությունների նախագիծը, որոնք կատարվել են աշխատանքային խմբի կողմից՝ առաջնորդվելով որոշակի սկզբունքներով.

- Ավելացնել մասնագիտական դասընթացների ժամաքանակները՝ ոչ մասնագիտականների հաշվին:
- Անհրաժեշտության դեպքում ավելացնել կամ հանել մոդուլներ՝ կրթության որակը բարելավելու նպատակով:
- Հաշվի առնելով նորմատիվային պահանջները կատարել առարկաների տեղաշարժ մոդուլների անհրաժեշտ շարունակականությունը ապահովելու նպատակով:

Մասնավորապես „ Կիրառական արվեստ „ մասնագիտության 2015-2019 ուսումնական պլանում առաջարկվում են հետևյալ փոփոխություններ, որոնք 2015-2016թթ/ 2014-2015թթ. համեմատությամբ/ աշխատանքային ուսումնական պլանները արտացոլվում են հետևյալ կերպ.

Կիսամյակ	2014-15 ուս.պլան	Կիսամյակ	2015-16 ուս.պլան
1	Գծանկարչություն-1 /4դ.,60գ./	1	Գծանկարչություն-1 /6դ.,90գ./
1	Կոնստ. և տեխ. գծագ. / 8դ.,24գ./	1	Գծագրական երկրաչ. /8դ., 24գ./
1	Աշխ. նյութի վրա-1 / 32+16+16/	2	Աշխ. նյութի վրա-1 / 16+16/
2	Գունանկարչություն-2 /8դ, 56գ./	2	Գունանկարչություն-2 /6դ, 74գ./
2	Աշխ. նյութի վրա-2 / 32+16+16/	2	Աշխ. նյութի վրա-2 / 32+32/
3	Աշխ. նյութի վրա-3 / 32+16+16/	3	Աշխ. նյութի վրա-3/ 64/
4	Աշխ. նյութի վրա-4 / 32+16+16/	4	Աշխ. նյութի վրա-4/ 64/
5	Հնագույն և հին շրջ. հայ արվ. պատմ. /24 դ, 8ս/	5	Հնագույն և հին շրջ. հայ արվ. պատմ. /48 դ, 16ս/
5	Գծանկարչություն-5 / 96գ./	5	Գծանկարչություն-5 / 64գ./
5	Միջնադարի արտ. արվ. պատմ. / 24դ., 8ս./	6	Միջնադարի արտ. արվ. պատմ. / 24դ., 8ս./
5	Բիռնիկա, Ինֆորմատիկա, Գունատեսություն, Շրիֆտ	5	Գունատեսություն Շրիֆտ
6	Էկոլոգիա, Ինտերիեր, էքստերիեր	6	Բիռնիկա, Ինտերիեր, էքստերիեր
		6	Կուսային աշխատանք

Արդյունքում առաջին և երկրորդ կիսամյակների կամընտրական առարկաների բոլոր առաջարկվում է հանել, քանի որ ուսանողները ընտրելու հնարավորություն չունեն: Երկրորդ կիսամյակի լսարանային ժամերը 34-ից դարձել է 31, իսկ 6-րդ կիսամյակում՝ 23-ից 30:

„Դիզայն,, մասնագիտության ուսումնական պլանում առաջարկվում են հետևյալ փոփոխությունները.

Կիսամյակ	2014-15 ուս.պլան	Կիսամյակ	2015-16 ուս.պլան
1	Գծանկարչություն-1 /80գ./	1	Գծանկարչություն-1 /96գ./
1	Գծագրական երկրաչ. /8դ., 24գ./	1	Գծագրական երկրաչ. /16դ., 48գ./
1	Աշխ. նյութի վրա-1 / 48գ./	2	Աշխ. նյութի վրա-1 / 64գ./
1	Գունանկարչություն-1 /64գ./	1	Գունանկարչություն-1 /4դ, 60գ./
1	Կոմպոզիցիա-1/ 96գ./	1	Կոմպոզիցիայի հիմունքներ-1/ 16դ.32գ./
3	Էկոլոգ. և բնապ. հիմ./32դ./	1	Էկոլոգ. և բնապ. հիմ./32դ./
		1	Մասնագիտական ներած. /32դ. /
2	Կոմպոզիցիա-2/ 80գ./	2	Կոմպոզիցիայի հիմունքներ-2/ 8դ.24գ./
		2	Համակարգ. գրաֆիկա-1 /8դ., 40գ./
1,2	Քանդակագործ. -1,2/8դ.,24գ./ Դիցաբանություն-1,2	2	Քանդակագործ. -1/8դ.,24գ./
		2	Գեղագիտություն /32դ./
2	Հեռանկարչություն / 8դ., 24գ./		

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա.Առաքելյանը նշեց, որ ունեցել է ակտիվ մասնակցություն փոփոխությունների առաջարկման ժամանակ և կարևորեց դասավանդողների դերը առարկաներից ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործում: Կ.Ղուլիջանյանը ողջունեց վերոնշյալ մոտեցումները և դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառումը համարեց ուսուցման պրոցեսի հաջողության գրավական :

ՈՐՈՇԵՑԻՆ - „Կիրառական արվեստ,, և „Դիզայն,, մասնագիտությունների ուսումնական պլանները առաջարկված փոփոխություններով հանդերձ ներկայացնել մասնաճյուղի տնօրինության հաստատմանը:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկան ամբիոնների վարիչներ՝ Ա.Միրզոյանը և Մ.Մելքունյանը: Նրանք մասնակիցներին ներկայացրեցին 2015-16 ուստարվա ամբիոնային և անհատական բեռնվածությունները, և այն առարկաների ցանկը, որոնց ծածկույթը առայժմ ապահոված չէ: Այդ առումով 2015-16 ուստարում անհրաժեշտ է գեղանկարիչ/ Գ.Զավրուշյանը առողջական խնդիրների պատճառով չի կարող շարունակել աշխատել/ և դիզայներ՝ կապված „Դիզայն,, մասնագիտության երկրորդ կուրսում մասնագիտական նոր առարկաների ավելացման հետ:

Ա.Միրզոյանը բարձաձայնեց դասաբաշխման այն սկզբունքների մասին, որոնցով առաջնորդվել է գործընթացը իրականացնելիս.

- այն առարկաների դասավանդողները, որոնք նախորդ տարիներին հաջողություն են ունեցել /ուսանողների գրավոր և բանավոր հարցման արդյունքները, ամբիոնի վարիչի և կոլեգաների դասալսումների արդյունքները և այլն/
- պորտֆոլիոների առկայությունը
- դասավանդողների մասնագիտական և մանկավարժական որակները
- ուսանողների չորս տարիների ուսումնառության ընթացքում հնավոր բոլոր մասնագետների հետ շփման հնարավորություն՝ վերջիններիս <<ձեռագրերի>>, ոճի և մոտեցումների յուրացման նպատակով:

Զեկուցողները նշեցին , որ ամբիոնների աշխատակիցները ստանալով հաջորդ տարվա բեռնվածությունները պետք է անցնեն առարկայական փաթեթների կազմանն աշխատանքների իրականացմանը՝ ներկայացնելով համապատասխան ամբիոնների քննարկամանը և հաստատմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս. Հովհաննիսյանը, Մ. Ստեփանյանը և Ա. Զիբուխյանը նշեցին, որ հարցը մանրամասնորեն քննարկվել է ամբիոններ համատեղ նիստում, բոլոր դասավանդողներին տեղեկացվել են իրենց ծանրաբեռնվածությունների մասին և աշխատում են այդ ուղղությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հուլիսին պլանավորված 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի վերջին նիստը ամբողջությամբ նվիրել առարկայական ծրագրերի և փաթեթների քննարկմանը և հաստատմանը:

2. Մինչև ս/թ հունիսի 30-ը դասավանդողները համապատասխան ամբիոններ ներկայացնեն 2015-16 ուստարվա աշխատանքային պլանով նախատեսված բոլոր առարկայական ծրագրերը և փաթեթները:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ ֆակուլտետի դեկան Ա.Շ.Մարգարյանը: Նա մասնակիցներին ներկայացրեց երկրորդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին տեղեկատվություն:

2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանը օբյեկտիվ և թափանցիկ անցկացնելու համար ֆակուլտետի աշխատակազմը յուրաքանչյուր, այդ թվում նաև այս կիսամյակ ձեռնարկում է հետևյալ միջոցառումները .

- Գրաֆիկի ծանոթացում և քննարկում՝ մինչև նրա հաստատվելը, որտեղ հաշվի են առնվում բազմաթիվ հանգամանքներ/ քննությունների միջև եղած օրերի քանակը, տեսական և գործնական առարկաների հերթականությունը և այլն/
- Հարցաշարերի , թեստերի և առաջադրանքների նմուշների տրամադրման և քննարկման գործընթացի ստուգում
- Սահմանված նմուշի հարցատոմսերի և հարցաշարերի հետ նրանց համապատասխանության ստուգում
- Մինչև երկրորդ ընթացիկ ստուգման կամ քննության օրը մուտքերի կատարողականի ստուգում /սկսած 12 –րդ շաբաթից/ և անհրաժեշտության դեպքում լրացման կազմակերպում
- Մասնագիտական մեծ կրեդիտատարություն ունեցող առարկաների քննությունների անցկացում հանձնաժողովներով ` դասավանդողների գնահատման սուբյեկտիվ մոտեցումների նվազեցման նպատակով
- Վերահսկողության սահմանում ոչ մասնագիտական կամ հարակից առարկաների քննական պրոցեսների նկատմամբ՝ հիմնականում ուսանողական կառույցների և ուսումնական խորհրդատուի մասնակցությամբ
- Հրապարակայնության ապահովում ` պաշտոնական կայք-էջում տեղադրելու և հայտարարությունների տախտակին փակցնելու միջոցով
- Նույն օրը տեղեկագրերի լրացում լսարանում և սքանավորում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա.Հ.Միրզոյանը, Մ.Մելքումյանը, Դ.Չիբուխյանը: Նրանք հաստատեցին մոտեցումների արդյունավետությունը և առաջարկեցին քննաշրջանի գործընթացները կազմակերպելիս առաջնորդվել ներկայացված սկզբունքներով:

ՈՐՈՇԵՑԻՆ 1.Հանձնարարել ամբիոնների վարիչներին ժամանակին և բարձր մակարդակով իրականացնել քննաշրջանի կազմակերպման հետ կապված աշխատանքները:

2.Հանձնարարել ամբիոնների վարիչներին, դեկանատին և մասնագիտության պատասխանատուին քննաշրջանի ընթացքում սահմանել վերահսկողություն՝ բացառելով ցանկացած բացասական երևույթ:

Ընթացիկ հարցերի ենթատեքստում ԵՊՀ ԻՄ տնօրեն Ս.Առաքելյանը մտահոգություն արտահայտեց դիմորդների հետ տարվող աշխատանքների որակի և ԲՈԻՀ-ի գրավչության աստիճանի բարձրացման վերաբերյալ և նշեց, որ յուրաքանչյուր կրթական ծրագիր հաջողված կլինի, եթե դիմորդների, հետևաբար նաև ուսանողների թիվը և նրանց մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները լինեն պատշաճ մակարդակի վրա:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.Շ.Մարգարյան

Ա.Ռ.Մելքումյան